ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 5. 1962 Общественные науки

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Մարտի 23-ին տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի տարեկան ժողովը։ Ժողովը բացվեց Հայկական ՍՍՌ ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանի ներածական խոսքով։

ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՊՐԵԶԻԴԵՆՏ Վ. Հ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ՆԵՐԱԾԱԿԱՆ ԽՈՍՔԻՑ.

Պրեզիդենտը նշեց, որ հաշվետու տարին նշանավորվում է կարևորագույն պատմական երևույթներով։ Սովետական Միության Կոմունիստական պարտիայի XXII համագումարը ընդունեց ՍՄԿՊ նոր Ծրագիր, մեր երկրում կոմունիզմի կառուցման կոնկրետ նախագծումներ։ Սովետական գիտության և տեխնիկայի հսկայական հաջողությունները հնարավոր դարձրին տիեզերքի նվաճումը սովետական մարդու կողմից։ Պանցնեն տարիներ,—ասում է ընկ. Վ. Հ. Համբարձումյանը,—բայց Սովետական Միության կառավարության ղեկավար Ն. Ս. Խրուշչովի ջերմ հանդիպումը և զրույցը Հայաստանի գիտնականների հետ միշտ կհիշվի մեր Ակադեմիայի տարեգրության մեջ, որպես ժողովրդի և կուսակցության կողմից դեպի գիտությունը ունեցած ուշադրության մեծ նշան։ Ն. Ս. Խրուշչովը կարևոր խորհուրդներ տվեց մեզ, մանավանդ գիտության կազմակերպման վերաբերյալ։

Վերջերս մեր Ակադեմիան այցելեց և Հայաստանի մի խումբ գիտնականների հետ զրույց ունեցավ նաև ՍՍՌՄ Մինիստրների Սովետի նախագահի տեղակալ ընկեր Անաստաս Միկոյանը։

Որքան ուրախացանք մենք, երբ նա հաղորդեց մեզ ընկեր Խրուշչովի տպավորությունները Հայաստանի գիտնականների աշխատանքի մասին։ Մասնավորապես հաճելի է նրա այն տպավորությունը, որ մեր գիտական աշխատողների զգալի մասը համառորեն աշխատում է ժողովրդա-տնտեսական խոշոր նշանակություն ունեցող խնդիրների լուծման վրա, ձգտում է Հայաստանի հետագա ինդուստրիալ վերելքը ապահովել համապատասխան գիտա-տեխնիկական բազայով։

Անցած տարվա ընթացքում Երևան այցելեց և Հայաստանի գիտական հիմնարկների հետ ծանոթացավ ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Մ. Վ. Կելդիշը, որին մենք պարտական ենք բազմաթիվ խորհուրդների և դիտողությունների համար։ Այնուհետև ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանն արձանագրեց, որ 1961 թ. Ակադեմիայի գիտական հիմնարկները իրենց գիտական գործունեության բնագավառում ձեռք բերեցին մի շարք լուրջ նվաճումներ սկսած ճշգրիտ գիտություններից վերջացրած հասարակական գիտություններով։

Մեր գիտական հիմնարկները լայնորեն ու հաճախ մեծ հաջողությամբ մասնակցում են համամիութենական մի շարք կարևորագույն ուղղությունների

ու պրոբլեմների լուծմանը՝ մեծ մասամբ պահպանելով իրենց գիտական ինքնուրույնությունը, չկրկնելով միության ուրիշ հիմնարկներին։ Միևնույն ժամանակ շատ կարևոր է, որ լինի կոորդինացում, որ մենք միասին և կապակցված կերպով աշխատենք, բայց միևնույն ժամանակ պահպանենք մեր ուրույն տեսը գիտության մեջ։

Կատարված գիտական աշխատանքների մի մասը ունի կարևոր նշանակություն մեր Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսության համար։ Մեկ տարվա ընթացքում կազմակերպվեցին մի քանի նոր գիտական հիմնարկներ, այդ թվում՝ Լենինականում ստեղծված Գեոֆիզիկայի և ինժենեռային սեյսմոլոգիայի ինստիտուտը, որը ղեկավարում է ակադեմիկոս Ա. Դ. Նազարովը։

Ինչպես դուք լավ գիտեք Սովետական Հայաստանի ապագան արդյունաբերության զարգացման մեջ է։ Բնակչության արագ աճը թելադրում է մեզ ապահովել արդյունաբերության շատ արագ տեմպեր։

ՀԿՊ Կենտրոնական Կոմիտեն ճիշտ է նախատեսում, որ անհրաժեշտ է առաջիկա 20-ամյակում ապահովել արտադրանքի ավելի մեծ զարգացում։ Հայաստանում արտադրանքի աճի այդպիսի տեմպերի իրականացումը պահանջում է ժողովրդի բոլոր ուժերի լարում։ Ուստի մեր գիտական աշխատողները պետք է ամեն կերպ աջակցեն արտադրական ուժերի զարգացմանը, գլխավորեն ոչ միայն տեխնիկական պրոգրեսը, այլև առաջ քաշեն ու լուծեն նոր տեխնիկական խնդիրներ, թափանցեն ժողովրդական տնտեսության բոլոր խնդիրների մեջ։ Պետք է սակայն խոստովանել, որ գիտական աշխատողների միայն մի մասն է լծվել այդ աշխատանքին։

Ընկ. Համբարձումյանը նշում է Մնջոյանի, Ալեքսեևսկու, Մերգելյանի, Բունյաթյանի, Ադոնցի և ուրիշների ղեկավարությամբ աշխատող գիտական կոլեկտիվների նվաճումները, ինչպես և կոնկրետ դիտողություններ է անում նրանց հետագա աշխատանքների մասին։ Կանգ առնելով Ակադեմիայի գիտական կոլեկտիվներում նկատվող թերությունների վրա, ընկ. Համբարձումյանը ընդգծում է գիտության և արդյունաբերության ավելի սերտ կապի անհրաժեշտությունը, երիտասարդ գիտական կադրերի պատրաստման, նորարարության զարգացման անհրաժեշտությունը։

Ընկ. Համբարձումյանը հատուկ ուշադրություն է նվիրում առանձին ինստիտուտներում տեղ գտած թերությունների, աշխատանքային կարգապահության և այլ հարցերին։ Պրեզիդենտի խոսքում հատուկ տեղ են գրավում արտադրության աշխատողների և հատկապես արդյունաբերական բանվորների փորձի, տեխնիկական նվաճումների հաշվառման, տեսական ընդհանրացման, ինչպես նաև գիտական-տեխնիկական-մասսայական գրականության հրատարակման հարցերը։

Մեր երկրի ընդերքի լավագույն հարստությունը, որի հայտնաբերման ու հետազոտման համար շատ պարտական ենք երկրաբաններին, դեռ չենք կարողանում լիովին ի սպաս դնել մեր արագ զարգացող արտադրության պահանջներին։ Այդ խնդրի իրագործումը նույնպես անսահման հեռանկարներ է բացում մեր գիտնականների առաջ։

Ընկերներ, այնպիսի տպավորություն է ստացվել, որ գիտնականների մի մասը չի լծված այդ կարևորագույն գործին։ Ես կասեի, չի անհանգստանում, երբ տեսնում է իր ասպարեզի հետ մնացող երևույթները։

Վերջերս ես բախտ ունեցա այցելելու Հայաստանի հյուսիսային շրջանները, այդ թվում Կիրովական։ Կիրովականում ես եղա քիմիական գործարանում։ Ինչպես գիտեք արհեստական կորունդը այժմ կարևորագույն նյութ է տեխնիկական ամենաառաջավոր ճյուղերի, այսօրվա տեխնիկայի ստեղծման համար։ Բայց ինչ արած, որ այդ գործով գիտնականներից ոչ ոք չի զբաղվում։ Հասկանալի է, որ կան շատ լավ քիմիկոսներ, որոնք իրոք օգնում են քիմիական այդ արդյունաբերությանը, և այս դեպքում մեր պահանջներն այդ քիմիկոսներին չի ուղղված։ Բայց մյուսները՝ ռադիստները, ֆիզիկոսները, դեռ անհրաժեշտ մասնակցություն չեն ցուցաբերում այդ գործում, մինչդեռ այդ գործը շատ մեծ հեռանկարներ ունի։

Խոսելով կադրերի ճիշտ ընտրության և պատրաստման ասպարեզում եղած թերությունների վերացման մասին, պրեզիդենտը ասում է, որ գիտության հիմնական շարժիչ ուժը համեմատաբար երիտասարդ կադրերն են։ Խոսքն, իհարկե, դեռ բոլորովին երիտասարդներին չի վերաբերվում, այլ համեմատաբար երիտասարդներին, որոնք իրենց վրա են վերցնում հիմնական ծանրությունը և կատարում են հիմնական աշխատանքը՝ ինստիտուտներում և լաբորատորիաներում. բայց դա լինում է հաճախ այն դեպքերում, երբ երիտասարդ կադրերն ընտրված են լինում հաջող կերպով։ Ուրեմն մեզանից ամեն մեկը, մանավանդ ավագ սերնդի մարդիկ, պետք է մտածեն այն մասին, թե արդյոք երևու՞մ են մեր շուրջը տաղանդավոր երիտասարդներ, ամեն ինչ է արվու՞մ այդպիսի տաղանդավոր երիտասարդներին ընտրելու և առաջ քաշելու համար։ Գիտական աշխատանքի մեջ հարկավոր է, որ խրախուսվեն դժվարությունները հաղթահարելու ընդունակ երիտասարդները, որոնք իրենք բացեն իրենց ճանապարհը, առաջ գնան ոչ միայն այն ուղղությամբ, որով գնում են ավագները, այլև պատրաստ են փնտրել նորանոր ուղիներ, չշեղվելով մեր տրադիցիաներից։ Ավագ սերնդի ներկայացուցիչներից քչերը կարող են ասել, որ կարողացել են այդ խնդիրը լուծել։ Իսկ այն, որ մեզ մոտ ընտրում են և մինչև անգամ ինստիտուտների աշխատանքի մեջ են ներդրավում այնպիսի մարդկանց, որոնք թույլ են գիտական տեսակետից, անընդունելի է։

Այդ թույլ գիտաշխատողները սիրում են գիտությունը, բայց գիտությունը նրանց չի սիրում։ Այդ բանը երևում է մի շարք ինստիտուտների պրակտիկայից։ Վերցնենք լեզվի ինստիտուտը։ Դուք գիտեք, վերջերս պարզվեց, որ մթնոլորտը այնտեղ չափազանց վատառողջ է, բայց երբ քննում ես, թե ինչումն է բանը, տեսնում ես, որ կան մարդիկ, որոնց համար գիտության շահերը շատ հեռու են։ Նրանք զբաղված են մեծ չափով անձնական հաշիվներով։ Պետք է շատ մտածել նաև ղեկավար աշխատանքներում երիտասարդ աշխատողներին առաջ քաշելու մասին։

Գիտությունների ակադեմիայի Նախագահությունը պետք է այդ ուղղությամբ աշխատի և բոլորս պետք է համոզված լիննք, որ եթե մենք երիտասարդությանը առաջ չքաշենք (դուք այդպիսի փաստեր կտեսնեք զեկուցումից), ապա այդ ժամանակ մեր գործերը վատ կգնան, մենք կարող ենք լավ ճառեր ասել այս ամբիոնից, բայց գործը կմնա նույն տեղում։ Առաջ քաշման, կադրերի որակի բարձրացման մասին քիչ ենք մտածում, բաժանմունքների վարիչները քիչ են լինում հիմնարկներում և քիչ են հետևում սեմինարների կազմակերպմանը, քիչ են հետևում, թե ինչպես է գնում կադրերի որակի բարձրացու-

մը։ Ի՞նչ են կարդում, քի՞չ են կարդում, թե շատ։ Պետք է ավելի շատ կարդալ ու շատ ավելի, գուցե, մտածել։ Պետք է նաև ազատ ժամանակ ունենալ՝ մտածելու համար։

Լինում են դեպքեր, երբ երիտասարդներին այնպես ենք լծում, որ նրանք բոլորովին ժամանակ չեն ունենում ինքնուրույն ստեղծագործական ու գիտական աշխատանքով զբաղվելու համար։ Նրանք ծանրաբեռնվում են առավելապես լաբորատոր աշխատանքով։

Մենք դեռ չենք հասել այն բանին, որ մեր Ակադեմիայի հիմնարկներում լինի իսկական աշխատանքային կարգապահություն։

Հասկանալով աշխատանքի պայմանների և շենքերի մասին, պրեզիդենտն ընդգծում է, որ Ակադեմիան շատ խոշոր թերություններ ունի կապիտալ շինարարության գծով։ Մեր ռեսպուբլիկայի կապիտալ շինարարության բնագավառում Գիտությունների ակադեմիան գտնվում է վերջին տեղում։ Շինարարության մինիստրությունը ամենավերջին ուշադրություն նվիրում է գիտական օբյեկտների կառուցմանը։ Հաշվետու տարվա ընթացքում նման աշխատանքների միայն 45 տոկոսն է կատարված, իսկ դա նշանակում է, որ մեզ մոտ ստացվել է անտանելի դրություն, մենք ունենք որոշ պլաններ, այդ պլանների համաձայն մենք հավաքագրում ենք մարդիկ, պատրաստում ենք նրանց և պետք է ապահովենք աշխատանքի տեղով, իսկ ստացվում է, որ այդ տեղը անբավարար է։ Հիմա, եթե ասենք, ձգձգվում է Օրգանական քիմիայի կամ Երկրաբանական ինստիտուտի համարյա պատրաստի շենքի շահագործումը, ապա մենք չենք կարող սկսել մեր մյուս օբյեկտների շինարարությունը և 7-ամյակի իրականացումը այդ տեսակետից կտուժի։

Մենք քիչ ենք մտածում կարևոր, հանրամատչելի գրականություն ստեղծելու մասին, Ակադեմիան քիչ է հրատարակում համապատասխան գրքեր, քիչ է կապը Ակադեմիայի գիտնականների և ժողովրդի միջև։ Կիրովականի ավտոմատիկայի գործարանում հիանալի երիտասարդներ կան։ Այնտեղ—բոլորը տասնամյա կրթություն ունեն, երբ մարդ նայում է նրանց դեմքին, տեսնում է, թե ինչպես են նրանք աշխատում, մարդ ուղղակի ոգևորվում է։ Ես նրանց տեսնելով ոգևորվեցի, ուրախացա, որ կան այդպիսի հիանալի երիտասարդներ և հիանալի աղջիկներ։ Հարցրեցի ես դիրեկտորին, լա՞վ են աշխատում, ի՞նչ գրականություն եք տալիս նրանց, որ բարձրացնեն իրենց մակարդակը. դիտեր, ասում է, գրականություն չկա։ Եվ նա ճիշտ է ասում, որովհետև, իրոք այդպիսի գրքեր, մանավանդ հայերեն լեզվով համապատասխան գրականություն, չկա։ Մենք բանվորին տեխնիկական գրականություն չենք տալիս, մանավանդ իրենց մասնագիտության վերաբերյալ, չենք գրում այդպիսի գրքեր։ Գործարանի ինժեներներն էլ կարող են գրել, մեր գիտնականներն էլ կարող են մեծ դեր խաղալ այդ գործում, մինչդեռ դա չի արվում։ Իհարկե դա ոչ միայն Ակադեմիայի, այլև մեր ամբողջ ինտելիգենցիայի գործն է։ Օրինակ, կարելի է ստեղծել ամենամատչելի գիտատեխնիկական ամսագիր։ Եկեք այդ գործը կազմակերպենք հենց մենք ինքներս։ Եկեք մեր ժուռնալներից մեկը փակենք և դրա փոխարեն հանրամատչելի «Գիտություն և տեխնիկա» ամսագիր ստեղծենք։

Պետք է որպես լավ օրինակ նշել մեր Ատլասի ստեղծումը։ Դա հանրամատչելի, բայց բարձր տիպի հրատարակություն է։

Ժողովուրդը առաջ է ընթանում, ժողովրդի մակարդակը բարձրացել է։ Եվ բնական է, որ նա պահանջում է ոչ թե սովորական, քիչ ինֆորմացիա պարունակող նյութ, այլ նյութով հագեցված գրքեր։ Այդ պատճառով էլ օրինակ մեր Ատլասն ունեցավ հսկայական հաջողություն։

Պետք է ուժեղացնել կապը ամբողջ միության գիտնականների հետ։ Ճիշտ է մեր կոորդինացնող հիմնարկները գտնվում են կանոնավոր կապի մեջ, ինչպես Սովետական Միությունում, այնպես էլ Հայաստանում, և կարծում եմ, որ այդ հիմնարկների ստեղծումը կուժեղացնի մեր կապերը միության մյուս դիսցիպլինական հիմնարկների հետ։ Բայց դրան զուգընթաց պետք է զարգացնել ու ամրացնել մեր ստեղծագործական, անմիջական կապերը։

Եկեք ընկերներ մեր ամբողջ ուժերով աշխատենք հանուն XXII համագումարի որոշումների կենսագործման և մեր բաժինը ներդնենք Սովետական Միության եղբայրական ընտանիքի մյուս ժողովուրդների ծավալած մեծ ու հերոսական պայքարում։

Թույլ տվեք մեր Ակադեմիայի ընդհանուր ժողովի սեսիան հայտարարել բացված և առաջին զեկուցման համար ձայնը տալ Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս քարտուղար ընկեր Մկրտչյանին։

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԸՆԿ. ՄԿՐՏՉՅԱՆԻ ԶԵԿՈՒՅՈՒՄԻՑ

Գիտության և գիտնականների նկատմամբ Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության հարաճուն հոգատարության վառ արտահայտությունը հանդիսացավ ՍՄԿՊ Կենտկոմի և ՍՍՌՄ Մինիստրների Սովետի 1961 թ. ապրիլի 3-ի ընդունած որոշումը՝ «Երկրում գիտա-հետազոտական աշխատանքների կոորդինացման բարելավման միջոցառումների և ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի գործունեության մասին», որը բոլոր գիտական աշխատողների կողմից ընդունվեց ջերմորեն,—ասում է ակադեմիկոս ընկ. Մկրտչյանը։

Սովետական երկիրը այժմ քայլում է համաշխարհային գիտա-տեխնիկական առաջընթացի ավանգարդում, աստիճանաբար գրավելով նորանոր առաջավոր դիրքեր գիտության և տեխնիկայի բոլոր վճռական ընագավառներում։

Հաշվետու տարում խոշոր հաջողություններ ձեռք բերեցին նաև Հայաստանի գիտական աշխատողները, որոնք հաջողությամբ մուծում են իրենց ավանդը մեր երկրում կոմունիզմի կառուցման գործում։ Կենսագործելով ՍՄԿՊ XXII համագումարի որոշումները Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիան, ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության տեմպերին համապատասխան, գիտության տարբեր ճյուղերում, կարևոր խնդիրների լուծման ուղղությամբ հաշվետու տարում հասել է մեծ հաջողությունների։

Ոգեշնչված Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության հոգատարությամբ, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հիմնարկները, ռեսպուբլիկայի գիտական աշխատողները վերցրեցին նոր սոցիալիստական պարտավորություններ ՍՄԿՊ XXII համագումարը արժանավայել դիմավորելու համար։ Ակադեմիայի բոլոր հիմնարկների գիտա-հետազոտական պլանները ավելի մոտեցվեցին կյանքին, պրակտիկային, ժողովրդական տնտեսության կարիքներին։

Ակադեմիայում ստեղծվեցին մի շարք նոր բաժիններ, լաբորատորիաներ, ինստիտուտներ։ Այսպես՝ Բիոքիմիայի սեկտորի բազայի վրա կազմակերպվեց Բիոքիմիայի ինստիտուտը, իսկ Միկրոբիոլոգիայի սեկտորը վերածվեց Միկրոբիոլոգիայի ինստիտուտի, Լենինականում ստեղծվեց Գեոֆիզիկայի և ինժեներային սեյսմոլոգիայի ինստիտուտ, Աշտարակում՝ Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտ։ Լուրջ փոփոխություն մտցվեց Սրտաբանության ինստիտուտի կառուցվածքի մեջ, որը վերածվեց Սրտաբանության և սրտի վիրաբուժության ինստիտուտի։ 1961 թ. կազմակերպական շրջան հանդիսացավ նաև ֆիզիկա-տեխնիկական լաբորատորիայի համար։ Կատարված վերափոխումների շնորհիվ լրիվ կերպով բնորոշվեց և էներգետիկայի և ջրային պրոբլեմների ինստիտուտների դեմքերը, որոշակիություն տրվեց նրանց աշխատանքին։

1961 թ. Ակադեմիայի 34 հիմնարկներում մշակվեցին 108 պրոբլեմ, 649 թեմա։ Պրոբլեմների և թեմաների վերը նշված թվից 30-ը կոորդինացվում էին ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի կողմից, իսկ 18-ը՝ ՍՍՌՄ Մինիստրների Սովետի Գիտա-հետազոտական աշխատանքների կոորդինացման պետական կոմիտեի կողմից։ 102 թեմա կատարվել են դիրեկտիվ օրգանների հանձնարարությամբ։ Ինչպես նախորդ տարիներին այնպես էլ հաշվետու տարում հատուկ ուշադրություն է դարձվել մի շարք ուղղությունների՝ ինչպես օրինակ, ֆիզիկա-մաթեմատիկական, երկրաբանական, տեխնիկական և քիմիական գիտությունների հետագա զարգացման վրա, որոնց առաջընթացը ակտիվ ներգործել է ժողովրդական տնտեսության մեջ տեխնիկայի կատարելագործմանը։

Հետագա զարգացում են ստացել կենսաբանական, բժշկական և հասարակական գիտությունների բնագավառում կատարված հետազոտությունները։ Բոլոր բնագավառների գծով ավարտվել է 242 թեմա։

Ընկ. Մկրտչյանը նշում է, որ՝ Ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների բաժանմունքի հիմնարկներում ձեռք են բերված նոր արդյունքներ մաթեմատիկայի, մեխանիկայի, ֆիզիկայի, աստղագիտության, ռադիոֆիզիկայի, հաշվողական մաթեմատիկայի բնագավառներում։

Մաթեմատիկայի և մեխանիկայի ինստիտուտում շարունակվել են հետազոտությունները կոմպլեքս և իրական տիրույթներում ֆունկցիաների տեսության, ֆունկցիոնալ անալիզի և մաթեմատիկական ֆիզիկայի եզրային խնդիրների ուղղությամբ։ Առանձնապես պետք է նշել ՀՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Մ. Մ. Ջրբաշյանի հետազոտությունները կոմպլեքս տիրույթում մերոմորֆ կամ ռացիոնալ ֆունկցիաներով մոտարկելու ապարատի կառուցման ուղղությամբ։ Լրիվ բնութագրված է այն ֆունկցիաների դասը, որոնք կարելի է միջին իմաստով մոտարկել Մյունցի սիստեմի գծային կոմբինացիաներով։

Հետաքրքրական աշխատանքներ են կատարված օրթոգոնալ շարքերի վերաբերյալ։ Լրիվ կառուցված են քվազի-անալիտիկ ֆունկցիաների համար Թեյլորի տիպի վերացման ապարատ։ Կատարված է հետաքրքիր ուսումնասիրություն ամբողջ ֆունկցիաներով կամայական կորերի վրա անընդհատ ֆունկցիաների մոտարկման վերաբերյալ։

Շարունակվել են հետազոտությունները սողքի ոչ գծային տեսության կոնտակտային խնդիրների լուծման ուղղությամբ։ Սողքի կլասիկ տեսության և անիզոտրոպ շերտավոր սալերի և թաղանթների ոչ գծային դինամիկ խնդիրների ուղղությամբ լույս է տեսել ՀՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ Ս. Համբարձումյանի «Անիզոտրոպ թաղանթների տեսություն» մոնոգրաֆիան։ Ինստիտուտում

ստացված արդյունքներից շատերը ունեն գիտական մեծ նշանակություն, օրիգինալ են իրենց բովանդակությամբ։ Հիշյալ բնագավառներում կատարած հետազոտություններով ինստիտուտը ստեղծել է հատուկ ուղղություն գիտության մեջ և ունի իր սեփական դեմքը։

1960 թ. վերջում Ռադիոաստղագիտության և Ռադիոֆիզիկայի մեթոդների բաժինները նոր կազմակերպված Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտին անցնելուց հետո, հաշվետու տարում Բյուրականի աստղադիտարանում հիմնական ուշադրությունը կենտրոնացվեց օպտիկական աստղագիտության գծով հետազոտությունների վրա։ Հաշվետու ժամանակաշրջանի կարևորագույն իրադարձությունը եղավ Նմիդտի սիստեմի մետրանոց աստղադիտակի շարք մտնելը, որը լուրջ նշանակություն ունի Սովետական աստղագիտության տեխնիկական պինման տեսակետից։

Ինչպես հայտնի է, հեռադիտակի հանդիսավոր բացումը տեղի ունեցավ Հայաստանում սովետական կարգերի հաստատման 40-ամյակին նվիրված տոնակատարության օրերին և իրագործվեց ՍՄԿՊ Կենտկոմի առաջին քարտուղար, ՍՍՌՄ Մինիստրների Սովետի նախագահ Ն. Ս. Խրուշչովի կողմից։

Հաշվետու տարում գիտական հետազոտությունները աստղադիտարանում շարունակվում էին արտագալակտիկաներ, անկայուն աստղեր և գալակտիկ միգամածություններ պրոբլեմների գծով։

Կարևոր նշանակություն ունեն գալակտիկաների էվոլյուցիոն զարգացման մեջ նրանց միջուկների ղերի բացահայտման, ինչպես նաև գալակտիկաների սիստեմների և կույտերի անկայունության վերաբերյալ ստացված նոր արդյունքները։

Դիտողական աշխատանքներից արժեքավոր են գալակտիկաների գունաչափությանը նվիրված հետազոտությունները, որոնք հիմք են ծառայել նրանց մեջ աստղային տարբեր տիպերի բնակչության և աստղային ու միջաստղային նյութի բաշխման վերաբերյալ մի շարք եզրակացությունների համար։

Չափազանց կարևոր է նախկինում ստացված և խորը կոսմոգոնիկ նշանակություն ունեցող այն եզրակացության հաստատումը (նոր, այդ թվում մետրանոց դիտակով ստացված լուսանկարների հիման վրա), որի համաձայն Քնարի համաստեղության մեջ գիտվում է սպիտակ թզուկ աստղերի մի ֆիզիկական խմբավորում։

Մի շարք հետաքրքիր արդյունքներ են ստացված 1960 թ. բռնկված Հաստելի Նոր աստղի, որոշ անկայուն աստղերի, բևեռացված լուսարձակում ունեցող միգամածությունների, միգամածություններում Լայման ալֆա քվանտների ճեղքման նոր մեխանիզմի, մոլորակաձև միգամածությունների ձևի վրա նրանց մագնիսական դաշտի ազդեցության, աստղասփյուռների լայնացման և այլ հարցերի վերաբերյալ։ Աստղադիտարանում ստացված արդյունքները ստացան էլ ավելի լայն ճանաչում համաշխարհային գիտության մեջ։

Հաշվողական կենտրոնում ավարտվեցին նոր, հզոր էլեկտրոնային հաշվիչ մեքենայի տեղակայման և մոնտաժի, ինչպես նաև մեքենայի կատարելագործման ուղղությամբ տարվող աշխատանքները։ Շարունակում են աշխատանքները էլեկտրոնային արագագործ մեքենայի միջոցով մաթեմատիկական և կիրառական խնդիրների լուծման ուղղությամբ։ Լուծվել են մի շարք խնդիրներ Միջուկենական և ռեսպուբլիկական զանազան հիմնարկների պատվերներով։

Հաջողությամբ ընթանում են աշխատանքները կիբեռնետիկայի, մասնավորաբար, մեքենայական թարգմանության բնագավառում։

Ֆիզիկայի ինստիտուտում կատարվել են հետազոտություններ բարձր էներգիայի մասնիկների ֆիզիկայի ասպարեզում։ Այդ հետազոտությունները կատարվել են կոսմիկական ճառագայթների վրա Նոր Համբերդի և Արագածի բարձր լեռնային կայանների սարքավորումների միջոցով, ինչպես նաև օգտագործելով սովետական արբանյակ նավերի և Ժնևի պրոտոնային արագացուցիչի վրա ճառագայթված ֆոտոէմուլսիաները։ Միաժամանակ ինստիտուտը Մոսկվայում և Դուբնայում գործող արագացուցիչների վրա կատարել է հետազոտություններ՝ տարօրինակ մասնիկների հատկությունների վերաբերյալ։

Ստացված են նաև նոր արդյունքներ ատոմային միջուկների կառուցվածքի և նյութի մեջ լիցքավորված մասնիկների ճառագայթման մասին։

Անցած տարի ինստիտուտի հիմնական գիտական և գիտա-տեխնիկական ջանքերը ուղղված են եղել 5 միլիարդանոց էլեկտրոնային օղակային արագացուցիչի կառուցմանը։

Այնուհետև զեկուցողը նշում է Տեխնիկական գիտությունների բաժանմունքի հիմնարկների ձեռք բերած նվաճումները։

Երկրաբանական գիտությունների ինստիտուտում ուսումնասիրվել են Հայաստանի պղինձ-մոլիբդենային, կոլչեդանային և բազմամետաղային հանքանյութերում հազվադյուտ և ցրված տարրերի բաշխման օրինաչափությունները, հայտնաբերվել են նոր հազվագյուտ միներալներ։ Ավարտվել են Ալավերդու պղնձա-քիմիական կոմբինատի անոդային շլամներից սելենի և թելուրի կորզման կիսարդյունաբերական փորձարկումները. ստացվել է ապրանքային արտադրանք։

Հիդրոգեոքիմիական, լեռնային ապարների մերձհանքային փոփոխությունների, տարրերի ցրման առաջնային եզրապսակների ուսումնասիրությունների հիման վրա հաջողությամբ մշակվել են Ալավերդու հանքային շրջանում «կույր» հանքամարմինների որոնման մեթոդները։

Ուսումնասիրվել են Մեղրու մագմատիկական զանգվածի միներալոգիական կազմը և գեոքիմիական, մագմատիզմի և հանքաբերության փոխադարձ կապի հարցերը։

Ընդհանրացվել են ռեսպուբլիկայի գլխավոր հանքաբեր ինտրուզիվ զանգվածների բացարձակ ժամանակագրության ուսումնասիրությունների արդյունքները. ճշտվել է առանձին զանգվածների բացարձակ հասակը։

Ընդհանրացվել են ռեսպուբլիկայի հարավ-արևմտյան շրջաններում նավթագազաբերության հեռանկարների պարզաբանման ուղղությամբ կատարված հետազոտությունների նյութերը, նշվել է որոնողական ու հետախուզական աշխատանքների հետագա ուղղությունը։

Ուսումնասիրվել են Ղարաբաղի և Գեղամա բարձրավանդակների նորագույն հրաբխային առաջացումները։

Ավարտվել է լանջերի սողքի տեսությանը նվիրված հետազոտությունների մի ցիկլը։

Հրատարակվել է Հայկական ՍՍՌ Ատլասը։

Սկսվել է Զանգեզուրի չօգտագործվող հողերի ուսումնասիրությունը. նրանց տնտեսական գնահատման նպատակով։

Անցյալ տարի հրատարակության են հանձնվել «Հայկական ՍՍՌ երկրաբանությունը» վեցհատորյակի առաջին՝ «Գեոմորֆոլոգիա» և երկրորդ՝ «Ստրատիգրաֆիա» հատորները։

Օրգանական քիմիայի ինստիտուտում ամինոմիացությունների և ացետիլենի ածանցյալների ասպարեզում տարված ուսումնասիրությունները բերել են մի շարք նոր օրինաչափությունների հայտնագործման և տեսական հիմունքների զգալի ընդարձակման։

Բացահայտված նոր օրինաչափությունների հիման վրա մշակված են մի շարք կարևոր քիմիական նյութերի՝ մոնոմերների, քացախաթթվական ալդեհիդի, պլաստիֆիկատորների, լուծիչների, թունանյութերի սինթեզման նոր եղանակներ։

1961 թ. հաջողությամբ ավարտվեցին գյուղատնտեսության վնասատու՝ գաղձի դեմ ինստիտուտի կողմից առաջարկված նոր թունանյութերի դաշտային փորձարկումները՝ 67 հեկտար տարածության վրա։

Զգալի նվաճումներ են ձեռք բերված ցիկլիկ պոլիմերացման տեսության ասպարեզում։ Մշակված է պոլիվինիլացետատների՝ վերին աստիճանի կարևոր, թանկարժեք ու դեֆիցիտային խեժերի ստացման սկզբունքորեն նոր եղանակ։ Հատուկ ուշադրության առարկա է ջերմակայուն պոլիմերների ստացումը. այս ուղղությամբ ձեռք են բերվել առաջին հաջողությունները—սինթեզված է 400 աստիճան ջերմակայուն մի նոր պոլիմեր։

Քիմիական տեխնոլոգիայի ասպարեզում տարվող աշխատանքները բերին երկֆազ հոսանքի մի քանի կարևոր օրինաչափությունների հայտնագործման, որոնց հիման վրա արվեցին պրակտիկ հետևություններ։ Գտնվեց պնևմատիկ տրանսպորտի նոր եղանակ, որով լուծվեց փոշենման ու հատիկավոր նյութերը մի կետից, կենտրոնացված ձևով, բազմաթիվ ընդունարանների մեջ բաշխելու հարցը։ Ներկայումս ինստիտուտի օգնությամբ Միության մի շարք գործարաններ նախագծական աշխատանքներ են տանում այդ եղանակի լայն ներդրման համար։

Էներգետիկայի ինստիտուտը անց է կացրել արժեքավոր հետազոտություններ ընդհանուր էներգետիկայի, հեռանկարային էներգետիկայի, էլեկտրաէներգետիկայի բնագավառներում, ինչպես և հաշվարկման միջոցների ու էներգասիստեմների ռեժիմների կառավարման ուղղությամբ։

Մշակված է բազմարևռիկների պարամետրերի տեսությունը և հաշվարկման մեթոդները, որի ժամանակ բազմարևռիկը իրենից ներկայացնում է ցանկացած բարդության և կազմության էլեկտրական սիստեմ։ Կառուցված է էլեկտրական համակարգի մաթեմատիկական մոդել, որի օգնությամբ ստացվում է հաշվարկների բարձր ճշտությունը։ Մշակված է հիդրո և ջերմային էլեկտրակայաններ պարունակող էլեկտրասիստեմների խնայողական ռեժիմների կառավարման տեսությունը։

Ջրային պրոբլեմների ինստիտուտը հաշվետու ժամանակաշրջանում զբաղվել է մոնոմոլեկուլյար թաղանթների օգնությամբ ջրային ռեսուրսների օգտագործման էֆեկտիվությունը բարձրացնելու պրոբլեմով։ Սևանի ափին գտնվող

Արտանիշ լճի վրա (40 հեկտար մակերեսով) կատարված նախնական հետազոտությունները ցույց են տալիս, որ հնարավոր կլինի ջրամբարներից և լճերից տեղի ունեցող գոլորշացումը կրճատել 15—25%-ով։

Մշակված է բարձր լեռնային լճերի և ջրամբարների ջերմային ռեժիմի տեսությունը, որը հնարավորություն կտա ղեկավարել նրանցից տեղի ունեցող գոլորշիացման պրոցեսը։

Կատարված են հիդրոտուրբինայի, գեներատորի և հիդրոկայանի կանոնավորման սիստեմի անցման պրոցեսների տեսական հետազոտություններ՝ կայունության հաշվարկի և կանոնավորման որակի բարձրացման համար։ Հետազոտման արդյունքները ամփոփված են առանձին մենագրության մեջ։

Զեկուցումը բացահայտում է նաև Կենսաբանական գիտությունների բաժանմունքի հիմնարկներում կատարված մեծ աշխատանքները։

Նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտը 1961 թվականին շարունակել է մշակել «Բնական և բիոլոգիական ակտիվ միացությունների քիմիան» պրոբլեմը։ Մի շարք նոր տվյալներ են ստացվել օրգանական միացությունների կառուցվածքի և նրանց միջև եղած կապերի պարզաբանման բնագավառում։

Ինստիտուտը ստեղծել է վիրահատությանը, թոքախտին, կոկերով հարուցվող հիվանդություններին, ցնցումներին, ու մի շարք այլ հիվանդություններին վերաբերող պրեպարատներ։

Պրեպարատներից 4-ը այժմ պաշտոնապես ներդրված են բժշկության մեջ, 6-ը ենթարկվում են կլինիկական փորձարկման միութենական մի քանի տասնյակ կլինիկաներում, մի շարք պրեպարատներ նախնական փորձարկման են ենթարկվում ինստիտուտի ներսում։ Ինստիտուտի կողմից ստացված պրեպարատները ցուցադրվել են ԱՄՆ-ում՝ միջազգային ցուցահանդեսում։

Բիոքիմիայի ինստիտուտը հաշվետու ժամանակաշրջանում շարունակել է մշակել գլխուղեղի ֆունկցիոնալ բիոքիմիա պրոբլեմը, հատուկ ուշադրություն դարձնելով գամմա-ամինոկարագաթթվի և ացետիլ-ասպարգինային թթվին, որոնք գլխուղեղի հյուսվածքում գտնվում են դգալի քանակությամբ։ Պարզվել են մի շարք օրինաչափություններ. այդ նյութերի առաջացման և օգտագործման վերաբերյալ՝ գլխուղեղի և այլ օրգանների հյուսվածքներում՝ նրանց զարգացման զանազան ֆազերում։

Բուսաբանական ինստիտուտը շարունակել է հետազոտել մեր ռեսպուբլիկայի բուսական աշխարհը, ձգտելով երևան բերել կերային նշանակություն ունեցող, կանաչապատման և ծաղկաղարդման համար հարկավոր բույսեր։ Հետաքրքրական են բույսերի աճեցողությանը և զարգացմանը վերաբերող ուսումնասիրությունները, որոնք պետք է ավելի ու ավելի մոտենան գործնական հարցերի լուծմանը։

Կենդանաբանական ինստիտուտը նշանակալից աշխատանք է կատարել ռեսպուբլիկայի կենդանական աշխարհի ուսումնասիրության ուղղությամբ։

Առանձնապես պետք է նշել հելմինտոզներին վերաբերող ուսումնասիրությունները։ Այս ուղղությամբ հետաքրքրական երևույթներ են հայտնաբերվել։ պարզվել է, որ այս հիվանդության դեպքում կենդանական օրգանիզմում խախտվում է սպիտակուցային և ածխաջրածնային փոխանակությունը, ինչպես նաև ծանր մետաղներինը (պղնձի և մոլիբդենի աղերի)։ Այս արդեն հիմք է հանդիսանում հակամիջոցների մշակման համար։

Միկրոբիոլոգիայի ինստիտուտը աշխատելով «Միկրոօրգանիզմների գործունեության կանոնավորման ֆիզիոլոգիական բիոքիմիական հիմունքները» պրոբլեմի ուղղությամբ մի շարք նոր տվյալներ է ստացել, որոնցից պետք է ամենից առաջ հիշատակել աղտոտոբակտերի ակտիվատորները, որոնց կիրառումը Սպիտակի շրջանում, ճակնդեղի ցանքերում, հանգեցրել է այս կուլտուրայի բերքատվության բարձրացմանը՝ մինչև 39%։ Հետաքրքրական է նաև նշել, որ մեր միկրոբիոլոգները ստացել են ֆիզիոլոգիական ակտիվ նյութեր, որոնք ունեն դիրեբելինանման հատկություններ։

Ագրոքիմիայի լաբորատորիան «Հայաստանի հողերի գլխավոր տիպերի ագրոքիմիական բնութագրումը» պրոբլեմը հետաքրքիր արդյունքներով ավարտելուց հետո ձեռնարկել է փոքր տարածությունում արհեստական սնուցման պայմաններում բույսեր աճեցնելու գործին։ Այս խնդիրները շատ հետաքրքրքրական են և առնչվում են կոսմիկական թռիչքների հետ։ Առաջին արդյունքները հույս են ներշնչում։

Սևանի հիդրոբիոլոգիական կայանը շարունակել է ուսումնասիրել Սևանի լճի կենդանական և բուսական աշխարհում տեղի ունեցող պրոցեսները՝ այս լճի ջուրը իջեցնելու պայմաններում։

Բժշկական գիտությունների բաժանմունքի դծով շարունակվել են աշխատանքները ռենտգենոլոգիայի, ֆիզիոլոգիայի, սրտաբանության և ռադիոբիոլոգիայի ընդարձակներում։ Սկսվել են աշխատանքներ սրտի վիրաբուժության դծով։ Ռենտգենոլոգիայի և օնկոլոգիայի ինստիտուտի էքսպերիմենտալ օնկոլոգիայի և քիմիոթերապիայի լաբորատորիայում ավարտվեց հակաուռուցքային պրեպարատների մի մեծ խմբի էքսպերիմենտալ ուսումնասիրությունը։

Վերջին տարիների ընթացքում Ֆիզիոլոգիայի ինստիտուտը հարստացել է նոր տարբերումներով, որը հիմնովին փոխեց ինստիտուտի առջև դրված խնդիրների լուծման նկատմամբ ունեցած նախկին մոտեցումը։ Ներկայումս ինստիտուտի կողմից ստացված են արժեքավոր տվյալներ կենտրոնական նервային համակարգության բարձրագույն բաժինների գործունեության վրա սիմպատո-ադրենալային մեխանիզմի ունեցած ներգործության վերաբերյալ։ Ինչպես լաբորատորիայում, այնպես էլ կլինիկայում հետազոտություններ են տարվում վնասված ողնուղեղի ֆունկցիաների վերականգնման համար տարբեր պրեպարատների ազդեցության բացահայտման ուղղությամբ։ Ինստիտուտում հաջողությամբ աշխատանքներ են տարվում գլխուղեղի ֆիզիոլոգիայի խնդիրների շուրջը։

Որոշակի հաջողությունների է հասել գյուղատնտեսական կենդանիների ֆիզիոլոգիայի լաբորատորիան (վարիչ ՊՍ ակադեմիկոս Ս. Կ. Կարապետյան), այստեղ ստեղծվեց հավերի նոր տեսակ, որը այժմ ներդրված է պրակտիկայում։

Անցնելով հասարակական գիտությունների բաժանմունքի աշխատանքներին, ընկեր Մկրտչյանը հատկապես ընդգծում է, որ ՍՄԿՊ XXII համագումարի պատմական որոշումները, սարտիայի նոր Ծրագրի ընդունումը հասարակական գիտությունների զարգացման կարևորագույն խթան հանդիսացան։

Փիլիսոփայության և իրավունքի սեկտորում նշանակալի կերպով լայնացվել է գիտական կոմունիզմին վերաբերող թեմատիկան։ Ավարտվել են «Սուբյեկտիվ գործոնի դերի աճը կոմունիզմի շինարարության ժամանակաշրջանում», «Հասարակական հակասությունների լուծման առանձնահատկություն-

ները և ձևերը կոմունիզմին անցման շրջանում» թեմաները, ինչպես նաև «Տեխնիկա, աշխատանք, կոմունիզմ» թեման, որը բացահայտում է արտադրության ավտոմատացման կապակցությամբ՝ հասարակության սոցիալական փոփոխությունների հարցը։ Ավարտվել են մի շարք թեմաներ՝ դիալեկտիկական և պատմական մատերիալիզմի ու հայ փիլիսոփայական մտքի պատմության գծով։

Աշխատանք է տարվել բուրժուական գաղափարախոսության քննադատության ուղղությամբ։ Ավարտված են լոկալ քաղաքակրթությունների տեսության և ժամանակակից պոզիտիվիզմի քննադատությանը վերաբերող թեմաներ։ Հրատարակության են հանձնվել «Մարքս-լենինյան էթիկայի մի քանի հարցեր», «Հայկական Սովետական Սոցիալիստական պետության կազմավորումը և ամրապնդումը», «Արդի արստրակցիոնիզմի հետադիմական էությունը» և այլ աշխատություններ։

Պատմության ինստիտուտի կոլեկտիվի ուշադրությունը ուղղված էր հայ ժողովրդի պատմության բազմահատորյակի ստեղծման վրա, որի գծով մշակվում են 12 թեմաներ։ Հրատարակվեց բազմահատորյակի պրոսպեկտը և հունիս ամսին կազմակերպվեց նրա լայն քննարկումը։ Ինստիտուտի կողմից հրատարակվել են «Մայիսյան ապստամբությունը Հայաստանում», «Պավլիկյանների շարժման ուսումնասիրման աղբյուրները» գրքերը և Ս. Տ. Երեմյանի կազմած 9 քարտեզները՝ Հայկական ՍՍՌ Ատլասում։ Պատմագիտության մեջ արժեքավոր ներդրում է Հայկական ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Մ. Գ. Ներսիսյանի «Ռուս-հայ հարաբերությունների պատմությունից» աշխատությունը, որը հեղինակի երկրորդ գիրքն է այդ պրոբլեմի շուրջը։

Հնագիտության և ազգագրության ինստիտուտը շարունակում էր Կարմիր բլուրի, Արին բերդի, Գառնիի, Դվինի, Լճաշենի, Շենգավիթի և այլ պեղումները։ Դաշտային աշխատանքների արդյունքների ամփոփմանը նվիրված՝ բաժանմունքի գիտական սեսիան ցույց տվեց, որ հաշվետու տարվա արշավախմբերի աշխատանքը շատ արդյունավետ է եղել և տվել է բազմաթիվ նոր արժեքավոր նյութեր։ Շարունակվում էր նախորդ տարիների ընթացքում ձեռք բերված արժեքավոր նյութերի մշակումը։

Ուսումնասիրվում են Հայաստանի վիմագրական հուշարձանները։ Հրատարակված է նրանց գիվանի 2-րդ պրակը, հրատարակության համար պատրաստված են 1-ին և 3-րդ պրակները։

Հրատարակության է պատրաստվել հայ ժողովրդական հեքիաթների 4-րդ հատորը, նախապատրաստվում են 5—6-րդ հատորները։

Պատմության թանգարանի կոլեկտիվը լրացրել ու կատարելագործել է հայ ժողովրդի պատմության ցուցահանդեսը։ Նախապատրաստվել է հայ ժողովրդի պատմության շրջիկ ցուցահանդեսը։ Մշակվել են մի շարք գիտա-հետազոտական թեմաներ պատմության և ազգագրության գծով։

Կազմվել են թանգարանային իրերի գիտական կատալոգներ։

Լեզվագիտության բնագավառում շարունակվում է աշխատանքը ժամանակակից հայերենի ուսումնասիրման ուղղությամբ։ Ավարտվել են «Բարդաշաղկապ նախադասությունները արդի հայերենում», «Հայ գրողների լեզվի և ոճի խնդիրները», և մի շարք այլ թեմաներ։ Ստեղծվել է ֆոնետիկայի կաբինետ։

Որոշ աշխատանք է կատարված նաև հայոց լեզվի պատմության հարցերի և նրա բարբառների ուսումնասիրման գծով։ Պատրաստ են խմբագրության

«Հայոց լեզվի հոմանիշների բառարանը» և «Լեզվագիտական բառարանը»։ Բառարանագիտության սեկտորը օգնություն է ցույց տալիս ՀՍՍՌ ԳԱ մի շարք հիմնարկներին՝ հատուկ տերմինաբանական բառարանների ստեղծման գործում։

Գրականագիտության բնագավառում շարունակվում է Սովետահայ գրականության հարցերի մշակումը։ Ավարտված են «Արդի սովետահայ գրականությանը» նվիրված մի շարք աշխատություններ։ Լույս է տեսել «Սովետահայ գրականության պատմության» առաջին հատորը, որը լավ գնահատականի է արժանացել գրական լայն շրջանների կողմից։ Պատրաստվում է և շուտով տպագրության կհանձնվի «Սովետահայ գրականության պատմության» երկրորդ հատորը։ Հայ նոր գրականության գծով կատարված են մի շարք կարևոր թեմաներ, որոնք կազմում են «Հայ նոր գրականության պատմություն» բազմահատորյակի առանձին գլուխները։ Լույս է տեսել «Հայ նոր գրականության պատմության» երկրորդ հատորը։ Տպագրվում է ու շուտով լույս կտեսնի առաջին հատորը։ Գրականության պատմության գիտական հրատարակությունը, դա ինստիտուտի հաշվետու տարվա կարևոր նվաճումն է։

Մշակվում են հայ հին գրականության պատմության, ինչպես նաև հայ գրականության մյուս ժողովրդների գրականությունների հետ ունեցած կապերի հարցերը։ Ժողովրդների կուլտուրական կապերի ուսումնասիրությունը ոչ միայն գրական, այլև քաղաքական կարևոր նշանակություն ունի։ Այդ իմաստով արժեքավոր ներդրում է Գ. Հովնանի «Ռուս-հայ գրական կապերը 19—20 դարերում» երկհատոր աշխատությունը։

Գրականության ինստիտուտում մեծ աշխատանք է կատարված հայ կլասիկ գրողների երկերի ակադեմիական հրատարակությունների նախապատրաստման ու հրատարակման ուղղությամբ։ Պատրաստ են Չարենցի Երկերի ժողովածուի 5 հատորը, Ռ. Պատկանյանի Երկերի ժողովածուի 2-րդ հատորը, Հ. Պարոնյանի Երկերի ժողովածուի 3-րդ հատորը, Հ. Հովհաննիսյանի Երկերի 1-ին և 2-րդ հատորները և այլն։

Ավարտվեց Խ. Աբովյանի երկերի 10 հատորյակը, ինչպես և Գ. Սունդուկյանի երկերի 4 հատորյակը։

Արվեստագիտության բնագավառում ավարտվել են մի շարք գիտա-հետազոտական թեմաներ հայ երաժշտության, ճարտարապետության, կերպարվեստի, թատրոնի և կինոյի տեսության և պատմության հարցերի վերաբերյալ։

Որոշ աշխատանք է կատարված կիրառական արվեստի գծով։ Գիտա-հետազոտական աշխատանքի հետ մեկտեղ պատրաստվել են նաև կիրառական արվեստի բազմաթիվ նմուշներ կավից, մետաղից և ապակուց արտադրության մեջ ներդնելու նպատակով։

Հրատարակվել են մի շարք գրքեր, որոնց թվում՝ «Պետրոս Ադամյան» աշխատությունը։

Գրականության և արվեստի թանգարանի աշխատանքը ընթացել է ֆոնդերի համալրման, գործող ցուցահանդեսների կատարելագործման և նոր ցուցահանդեսների նախապատրաստման ուղղությամբ։ Կազմակերպվել ու ցուցադրվել է Լենինական, Կիրովական, Հոկտեմբերյան և Ալավերդի քաղաքներում շրջիկ թատերական ցուցահանդես։

Ավարտվել է «Արևմտահայ թատրոնի պատմության ակնարկ» աշխատության առաջին հատորը, պատրաստվել են թանգարանի ֆոնդերի համառոտ

ուղեցույցի երկու պրակներ։ Հրատարակվել է «Գրական ժառանգության» 1-ին հատորը։

Արևելագիտության բնագավառում շարունակվում է Մերձավոր և միջին արևելքի երկրների նոր և նորագույն պատմության, տնտեսության և կուլտուրայի հարցերի մշակումը։ Արևելագիտության սեկտորի աշխատակիցների ուշադրության կենտրոնում է եղել այդ երկրներում իմպերիալիզմի և գաղութարարության դեմ մղվող ազգային ազատագրական պայքարի պրոբլեմը։

Ավարտվել են մի շարք թեմաներ նվիրված Թուրքիայի, Իրանի և Արաբական երկրների պատմության, տնտեսության ու կուլտուրայի հարցերին։

Քրդագիտության բնագավառում մշակվել է Իրաքի քրդերի ազատագրական շարժումների թեման, ինչպես և Սովետական Միության մեջ ապրող քրդերի կյանքի և ժողովրդական ստեղծագործության խնդիրները։

Հրատարակվել են «Քրդական ժողովրդական հեքիաթներ»-ի 1-ին հատորը, «Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի, և Անդրկովկասի այլ ժողովուրդների մասին» ժողովածուի առաջին հատորը։

Տնտեսագիտության ինստիտուտի կոլեկտիվը մշակել է թեմաներ «Հայկական ՍՍՌ տնտեսական զարգացման մի քանի հարցերը ՍՍՌՄ-ում կոմունիզմի ծավալուն շինարարության ժամանակաշրջանում» և «Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսության բալանսի հարցերը» պրոբլեմների գծով։

Ինստիտուտում մեծ աշխատանք է տարվել ռեսպուբլիկայի գլխավոր հեռանկարային պլանի հանգուցային հարցերի մշակման գործում Պետպլանին օգնելու ուղղությամբ։

Արտադրության հետ կապը ուժեղացնելու և պլանավորող ու տնտեսական օրգաններին օգնություն ցույց տալու գործում մեծ դեր խաղացին ինստիտուտի կողմից կազմակերպված երկու գիտական սեսիաները։ Դրանցից առաջինը, որը անցկացվեց Երևանի Ջերժինսկու անվան հաստոցաշինական գործարանում նվիրված էր ներարտադրական ռեզերվների հայտնաբերման ու օգտագործման հարցերին. մյուսը՝ միութենական ռեսպուբլիկաներում ազգային եկամտի հարցերին։ Համամիութենական այս կոնֆերանսի աշխատանքներին մասնակցում էին միութենական ռեսպուբլիկաների մի շարք գիտա-հետազոտական կազմակերպությունների, բուհերի, պլանավորող և ֆինանսավորող օրգանների աշխատակիցներ։ Այստեղ կազմակերպվեց նաև գիտական սեմինար ժողովրդական սպառման պրոբլեմների ուսումնասիրության մեջ վիճակագրական և մաթեմատիկական մեթոդների կիրառման հարցերի վերաբերյալ։

Հաշվետու տարում Ակադեմիայի մի շարք հիմնարկներում հրավիրվեցին գիտական խորհրդակցություններ և կոնֆերանսներ, որոնց մասնակցեցին ոչ միայն ռեսպուբլիկայի, այլև Սովետական Միության գրեթե բոլոր առաջատար հիմնարկները։

Էլ ավելի ընդլայնվեցին Ակադեմիայի գիտական կապերը արտասահմանյան երկրների գիտական հիմնարկների հետ։

Հաշվետու տարում արտասահմանյան 10 երկրներ են գործուղվել Ակադեմիայի 28 գիտական աշխատակիցներ, այդ թվում՝ 20-ը մեկնել են ԱՄՆ, Անգլիա, Ֆրանսիա, Իտալիա, Ճապոնիա և 8-ը՝ Եվրոպայի ժողովրդական դեմոկրատիայի երկրներ։

Ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը որպես սովետական պատվիրակության ղեկավար, որի կազմի մեջ մեր Ակադեմիայից

մտնում էին Բյուրականի աստղադիտարանի և Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի մի խումբ աշխատակիցներ մեկնել է ԱՄՆ՝ Միջազգային աստղադիտական միության (ՄԱՄ) 11-րդ համագումարի աշխատանքներին մասնակցելու համար։ ՄԱՄ-ի ընդհանուր ժողովում և սիմպոզիումներում Վ. Հ. Համբարձումյանը հանդես է եկել «Ոչ կայուն երևույթները գալակտիկաների սիստեմներում» և «Մի քանի դիտողությունների կուտակումների էվոլյուցիայի հարցի մասին» զեկուցումներով։ Զեկուցումներով ու հաղորդումներով հանդես են եկել նաև Աստղադիտարանի աշխատակիցներ ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների թեկնածուներ՝ Բ. Ե. Մարգարյանը, Կ. Ա. Գրիգորյանը, Ռ. Ա. Սահակյանը և Է. Ե. Խաչիկյանը՝ ցույց տալով աստղագիտության բազմակողմանի զարգացումը Հայաստանում։

1961 թ. սեպտեմբերին ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը, որպես Միջազգային աստղագիտական միության պրեզիդենտ, մասնակցել է Լոնդոնում տեղի ունեցած Միջազգային գիտական միությունների ասոցիացիայի կոնգրեսի աշխատանքներին։

Բիոքիմիայի ինստիտուտի մի խումբ աշխատակիցներ՝ ինստիտուտի դիրեկտոր ԳԱ ակադեմիկոս Հ. Խ. Բունյաթյանի գլխավորությամբ մասնակցել են Մոսկվայում կայացած բիոքիմիկոսների միջազգային 5-րդ կոնգրեսի աշխատանքներին։ Ակադեմիկոս Հ. Խ. Բունյաթյանը և Բիոքիմիայի ինստիտուտի մի խումբ աշխատակիցներ կոնգրեսի սեկցիաներում հանդես են եկել իրենց հետազոտությունների արդյունքները ամփոփող հետաքրքիր զեկուցումներով։

Ֆիզիկայի ինստիտուտի աշխատակիցներ՝ Խ. Պ. Բաբայանը, Տ. Լ. Ասաթիանին և Գ. Ա. Մարիկյանը, որպես գիտական-տուրիստներ, մասնակցել են կոսմիկական ճառագայթներին նվիրված Ճապոնիայում տեղի ունեցած միջազգային կոնֆերանսի աշխատանքներին։ Խ. Պ. Բաբայանը հանդես է եկել «Վեռների բարձունքներում թեթև ատոմային միջուկներով բարձր էներգիայի մասնիկների փոխազդեցության ուսումնասիրությանը», իսկ Տ. Լ. Ասաթիանին «Կոսմիկական ճառագայթման N-մեզոնների բևեռումը» զեկուցումով։

ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի վիցե-պրեզիդենտ, ակադեմիկոս Ա. Ռ. Հովհաննիսյանը գիտական գործուղմամբ եղել է Փարիզում, կատարել գիտա-հետազոտական աշխատանքներ, հետաքրքրական կապեր հաստատել ֆրանսիական ականավոր գիտնականների հետ։

Ժողովրդական դեմոկրատիայի երկրներ գործուղված մեր գիտնականները հնարավորություն են ունեցել յուրացնել եղբայրական երկրների գիտական փորձը, հարստացնել իրենց գիտելիքները, ինչպես նաև նրանց հաղորդել իրենց գիտական հետազոտությունների արդյունքները։

Լեհական ժողովրդական ռեսպուբլիկա գործուղված ԳԱ ակադեմիկոս Ն. Խ. Հարությունյանը մասնակցել է անհամասեռ մարմինների առաձգականության ու ճկունության տեսությանը նվիրված կոնֆերանսին, որտեղ հանդես է եկել «Սողքի տեսության մի կոնտակտային խնդիր՝ շփման ուժի հաշվառումով» զեկուցումով։ Ակադեմիկոս Ա. Լ. Մնջոյանը Չեխոսլովակիայի սոցիալիստական ռեսպուբլիկայում ծանոթացել է ֆիզիոլոգիապես ակտիվ պրեպարատների սինթեզի, ինչպես նաև նրանց կազմության, հատկությունների և ազդեցության մեխանիզմի բնագավառում տեղի քիմիկոսների նորագույն նվաճումների հետ։ Ակադեմիայի թղթակից-անդամ Մ. Զ. Սիմոնովը մասնակցել է Պրեզդենում կայացած թաղանթների կառուցման հավաքովի մեթոդներին նվիր-

ված միջազգային կոնֆերանսին և հանդես է եկել թեթև բետոնների տեխնոլոգիայի և նրանցից պատրաստվող իրերի բնագավառում Հայկական ՍՍՌ հաջողություններն արտացոլող զեկուցումով։ Արվեստի ինստիտուտի դիրեկտոր Ռ. Վ. Զարյանը գործուղվել է Ռումինիա՝ «Հայաստանի արվեստի պատմության ուրվագծերը» թեմայի համար նյութեր հավաքելու նպատակով և մեծ աշխատանք է կատարել հայ-ռումինական պատմական կապերին վերաբերող արխիվային նյութերի և ձեռագրերի ուսումնասիրության ուղղությամբ։

Ի կատարումն ՍՍՌՄ-ի և արտաքին հարաբերությունների միջև գիտատեխնիկական համագործակցության վերաբերյալ համաձայնագրերի, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հիմնարկները ընդունել և գիտության տարբեր բնագավառներում կատարվող գիտա-հետազոտական աշխատանքների հետ ծանոթացրել են արտաքին 30 գիտնականի ու մասնագետի, որոնցից 19-ը եղել են ժողովրդական դեմոկրատիայի, իսկ 11-ը կապիտալիստական երկրներից, այդ թվում՝ ԱՄՆ-ից, Անգլիայից, Ճապոնիայից, Շվեդիայից, Ինդոնեզիայից, Արգենտինայից, Լիբանանից, Ավստրալիայից։

Միջազգային գիտական կապերի հետագա ընդլայնում է տեղի ունեցել նաև նյութերի, գրականության և աշխատությունների փոխանակման գծով։

Սրանք են ահա Ակադեմիայի աշխատանքներում եղած հիմնական հաջողությունները,—ասում է ակադեմիկոս ընկ. Մկրտչյանը։ Նրանք անշուշտ կլինեին ավելի շատ եթե Ակադեմիայի նախագահության, բաժանմունքների և գիտա-հետազոտական հիմնարկների գործունեության մեջ տեղ գտած չլինեին մի շարք էական թերություններ։

Գիտական հետազոտությունների հաջող կազմակերպումը և նպատակասլացությունը կարևոր գործոններ են խոշոր նվաճումների համար։ Սակայն այդ տեսակետից Ակադեմիայի հիմնարկներում դեռևս գոյություն ունեն լուրջ թերություններ։ Հիմնարկի գիտական կոլեկտիվը ոչ միշտ է, որ կենտրոնացնում է իր ուժերը կարևորագույն խնդիրների համատեղ մշակման և լուծման վրա։ Ստացվում է այնպես, որ գիտական թեմատիկան կազմվում է ոչ ըստ գիտության պահանջի այլ առանձին գիտաշխատողների շահերից ելնելով։ Այդ բերում է բազմաթեմայնություն, գիտական ուժերի և միջոցների ցրում։ Բացակայում է կոմպլեքսային աշխատանքը կարևորագույն պրոբլեմների լուծման գործում, ինչպես հիմնարկի ներսում, այնպես էլ տարբեր ինստիտուտների միջև։ Այդ պատճառով Ակադեմիայի որոշ հիմնարկներ դեռևս չունեն իրենց ուրույն գիտական դեմքը։ Որպես օրինակ կարելի է բերել Բազիսորիոլոգիայի սեկտորը, որի թեմատիկ պլանում թեմաների թիվը գերազանցում էր գիտաշխատողների թվին։ Մինչև հաշվետու տարվա կեսերը նույն վիճակն էր տիրում նաև Արտաքինության և սրտի վիրաբուժության ինստիտուտում։

Այս կամ այն չափով նման երևույթ տեղի ունի նաև մի շարք այլ հիմնարկներում՝ Արևելագիտության սեկտորում, Միկրոբիոլոգիայի, Օրգանական քիմիայի, Գենդանաբանության և այլ ինստիտուտներում։

Պետք է նշել և այն, որ Ակադեմիայի հիմնարկների կապը արտադրության հետ դեռևս հեռու է բավարար լինելուց։ Հիմնարկները պետք է իրենց աշխատության կենտրոնում պահեն ժողովրդատնտեսական կարևոր նշանակություն ունեցող խնդիրները։ Այդ ուղղությամբ դեռևս թույլ է նաև Նախագահության աշխատանքը։

Քիչ չեն այն դեպքերը, երբ թեմաների կատարումը ձգձգվում է և նույն թեման տարբեր անվան տակ տարեցտարի տեղ է գտնում հիմնարկների թեմատիկ պլանների մեջ։ Այդ հատկապես նկատվում է Հասարակական գիտությունների բաժանմունքի հիմնարկներում։

Գիտական աշխատանքների զարգացման համար շատ կարևոր նշանակություն ունեն հանրային հարցերին նվիրված դիսկուսիաների կազմակերպումը, մի հարց, որը դեռևս դուրս է մնում գիտական հիմնարկների տեսադաշտից։

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ այդ տեսակետից թերի է աշխատանքը Ակադեմիայի պարբերական հրատարակություններում։

Որպես բացասական կողմ հարկ է կանգ առնել և այն բանի վրա, որ գիտաշխատողների մի մասը դեռևս չի ուսումնասիրում արտասահմանյան գրականությունը՝ կապված իր մասնագիտության հետ, չնայած որ Նախագահությունը տարեցտարի մեծ գումարներ է ծախսում օտար լեզուների ուսումնասիրման համար։

Գիտա-հետազոտական աշխատանքների հաջող կատարումը կապված է անշուշտ համապատասխան կադրերի գոյության և նրանց պատրաստման հետ, հատկապես գիտության նոր ուղղությունների գծով։

Այժմ գիտությունը գտնվում է իր զարգացման մի այնպիսի փուլում, երբ ավյալ պրոբլեմի բազմակողմանի մշակումը և լուծումը պահանջում է տարբեր մասնագետների համատեղ գործունեություն։

Նախագահությունը հնարավորություն է տալիս բոլոր հիմնարկներին յուրաքանչյուր տարի համալրելու գիտաշխատողների թիվը որակյալ կադրերով, մասնագետներով, հատկապես այնպիսի գիտությունների գծով ինչպիսիք են ֆիզիկան, քիմիան, մաթեմատիկան և էլեկտրոնիկան, կիբերնետիկան և այլն, որոնց նշանակությունը գնալով մեծանում է ոչ միայն բուն այդ գիտությունների զարգացման համար, այլև կենսաբանության, բժշկության և այլ գիտությունների ասպարեզում։

Այստեղից պարզ է, թե որքան մեծ պետք է լինի Ակադեմիայի հիմնարկների աշխատանքը այդ գծով, հատկապես ասպիրանտների միջոցով՝ կադրերի համալրման ու պատրաստման ուղղությամբ, որը սակայն դեռ չի գտնվել պահանջվող բարձրության վրա։

Որպես թերություն մնում է այն, որ մի կողմից միշտ չէ, որ ասպիրանտուրա են ընդունվում լիարժեք թեկնածուններ, մի կողմից լավ չի կազմակերպվում ասպիրանտների աշխատանքը, որոնց պատճառով ասպիրանտների մեծագույն մասը ժամանակին չի ավարտում դիսերտացիոն թեման։ Այսպես, 1961 թ. ասպիրանտուրան ավարտած 31 հոգուց և ոչ մեկը չպաշտպանեց դիսերտացիա։

Լուրջ պրոբլեմ է հանդիսանում այն, որ առհասարակ երիտասարդ կադրերի հասունացումը ընթանում է դանդաղ տեմպերով։

Այդ ցայտուն կերպով երևում է ստորև բերված թվերից։

Ակադեմիայի 1147 գիտաշխատողներից միայն 68-ը ունեն դոկտորի աստիճան և նրանց միջին հասակը հավասար է 51-տարեկանի, թեկնածուների միջին հասակը կազմում է 57, իսկ ակադեմիկոսներինը՝ 61։

Ակադեմիայի նախագահությունը հաշվել է այն վիճակի հետ, երբ շատ պաշտոններ, որոնք պետք է զբաղեցվեն գիտությունների դոկտորների կողմից, զբաղեցված են թեկնածուների կողմից։ Այսպես, գիտա-հետազոտական հիմ-

նարկների 34 դիրեկտորներից և ռեկտորների ու լաբորատորիաների 79 վարիչներից դոկտորներ են միայն 40-ը։

Եթե հաշվի առնենք, որ յուրաքանչյուր տարի ստեղծվում են գիտական նոր հիմնարկներ, բացվում նոր լաբորատորիաներ և բաժիններ, ապա պարզ կդառնա այն խզումը, որը գնալով ավելի է առաջանում դոկտորների պատրաստման տեմպի և եղած պահանջների միջև։

Ճիշտ է՝ գիտա-հետազոտական հիմնարկների ղեկավար կազմը հիմնականում կոմպլեկտավորված է բարձրորակ կադրերով, բայց և այնպես որոշ օղակներում նրանց թարմացումը նոր, երիտասարդ ուժերի առաջ քաշումը, անշուշտ, կունենա բարձր ազդեցություն։

Զգալիորեն բարելավվել է Ակադեմիայի հրատարակչական գործունեությունը։ Բարձրացել է գրքերի հրատարակման կուլտուրան, նրանց որակը, թեմատիկան դարձել ավելի նպատակասլաց։ Մեծ հետաքրքրություն ներկայացնող աշխատություններ են հրատարակվել ֆիզիկա-մաթեմատիկական, տեխնիկական, կենսաբանական, բժշկական և հասարակական գիտությունների գծով։ Լույս են տեսել մի շարք կարևոր մենագրություններ։ Բայց հրատարակչական գործունեության մեջ դեռևս կան լուրջ թերություններ։ Հրատարակչական պլանը կատարվել է անուններով 96,1 տոկոս, մամուլներով 99,2 տոկոս, տպաքանակով 93 տոկոսով։

Զեկուցողը վերջում ընդգծում է, որ առաջիկա տարում նոր, ավելի կարևոր խնդիրներ են դրվելու Գիտությունների ակադեմիայի հիմնարկների առջև։ ՍՄԿՊ XXII համագումարի որոշումների լույսի տակ վերանայված են Ակադեմիայի գիտա-հետազոտական աշխատանքների պլանները, որոնք ավելի են մոտեցված ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսությանը և նրա առջև դրված կոնկրետ խնդիրներին։ Այս բոլորը պահանջում են ուժերի նոր լարում և ավելի բրտնաջան աշխատանք։

Ակադեմիայի ողջ կոլեկտիվը կլարի իր ամբողջ ուժերը, ՍՄԿՊ XXII համագումարի կողմից առաջադրված խնդիրները մինչև վերջ և բարձր մակարդակով կատարելու համար։